Վերլուծություն

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության 2014 թվականի գործունեության վերաբերյալ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության և նրա ենթակայության ընկերությունների գործունեության հիմքում դրված են ՀՀ սահմանադրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրականացված նպատակային ծրագրերը ուղղված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ամրագրված Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության լիազորությունների իրականացմանը:

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը 2014 թվականին շարունակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը նպատակաուղղված գործունեությունը: Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները.

- Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով ապահովել տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն,
- պատրաստել հանրության հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ և արձագանքում հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին,
- Հասարակության լայն հատվածներին հասանելի դարձնել մշակութային և հասարակական արժեք ունեցող հայ ֆիլմ արտադրողների և լրագրողների կողմից ստեղծված Հայաստանի սոցիալական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող հեռուստահաղորդումները, փաստավավերագրական և գեղարվեստական ֆիլմերը,
- ձևավորել Հայկական աշխարհի միասնական տեղեկատվական դաշտ՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը, հայ ներուժի համախմբմանը և արտերկրի հայ գաղթօջախներում հայապահպանությանը,
- կերտել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի պատկերաձայնային միասնական ոճ՝ դյուրին դարձնելով այդ կառույցների գործունեության ճանաչելիությունը,
- ապահովել հեռարձակվող հաղորդումների տեխնիկական անհրաժեշտ որակն ու համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև արբանյակային կապով՝ եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում, իսկ ինտերնետային կապով՝ աշխարհի բոլոր երկրներում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները, ինչպես նաև սփյուռքի մեր հայրենակիցներին՝ ամենօրյա տեղեկատվություն ստանալու հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ,
- մշակել հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող սոցիալական գովազդի ընտրության և ներկայացման նոր սկզբունքներ՝ առաջնային համարելով հանրության պահանջմունքները և

հնարավորինս նվազեցնել հանրային հեռուստատեսության ու ռադիոյի վարկանիշային մրցակցությամբ պարտադրվող առևտրային հաղորդումները՝ ապահովելով հանրային հաղորդումների հեռարձակման առավել անկաշկանդ ընթացք,

- Հասարակության հոգևոր և մշակութային պահանջմունքների բավարարմանն ուղղված հեռուստառադիոհաղորդումների պատրաստում ու հեռարձակում,
- մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները: Պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում:
- ռադիոհաճախություններով, արբանյակային հեռարձակմամբ, ինչպես նաև ինտերնետային կապով Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակման ապահովում արտասահմանում:

Վերոնշյալ նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2014 թվականին իր գործունեության հիմքում դրել էր հետևյալ հիմնական խնդիրների իրագործումը.

- պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,
- պատրաստել հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս մնացած դեռահասների, գործազուրկների, ներառական կրթության մեջ ներգրավված սովորողների, հաշմանդամների խնդիրներին վերաբերող այնպիսի հաղորդումներ, որոնք հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորում են համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,
- բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայություն՝ որպես եթերային լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի ու երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը: Ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները: Ներկայացնել հայ գրականության լավագույն նմուշները կենդանի և դինամիկ եղանակով՝ երիտասարդական լսարանի առավելագույն ներգրավումն ապահովելու համար:
- համալրել հանրային հեռուստաընկերությունների ձայնային բազան, կազմակերպել ֆիլմերի կրկնօրինակման և հնչունավորման աշխատանքներ:
- շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, Կառավարության, Պաշտպանության նախարարության, Ոստիկանության գերատեսչական հաղորդումները: Զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և կենդանի հերոսներին: Նկարահանել ֆիլմեր հայրենական ոստիկանների, փրկարարների և շտապ օգնության գործունեության մասին,
- պատրաստել մանկապատանեկան ճանաչողական, ժամանցային և երաժշտական նոր հաղորդումներ: Ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացումներ, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,
- ապահովել ռադիոհաճախականություններով, ինչպես նաև ինտերնետային կապով Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով շուրջօրյա հաղորդումների հեռարձակումն

արտասահմանում: Ապահովել հանրապետության բոլոր բնակավայրերում և Արցախում Հանրային հեռուստաընկերության հաղորդումների արբանյակային կապով հեռարձակումը: Բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը,

- օգտագործել համակարգչային նորագույն տեխնոլոգիաներ հեռուստատեսային և ռադիո տարբերանշանների, ձայնային ազդականչերի միասնականացումը և տեխնիկական կիրառելիությունն ապահովելու համար,
- շարունակել Հանրային հեռուստաընկերության տեխնիկական փուլային վերազինման աշխատանքները:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և ոլորտի ընկերությունների առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ,
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ,
- 08.03.01.02. Հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.03. Ռադիո ծառայություններ,
- 08.03.01.04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ,
- 08.03.01.10. Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում
- 08.03.01.12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում
- 08.03.01.13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում
- 08.03.01.14. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում,
- 10.09.02.03. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում,
- 11.01.01.01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների համաձայն Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացված ծրագրերը և նշված ծրագրերի շրջանակներում բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները:

Աղյուսակ 1

2014 թ. կատարված ծրագրերը և դրանց դիմաց պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազար դրամ)

Ծրագրի անվանումը	Բյուջետային դասակարգում				Նախահաշիվ 2014 թ.	Ֆինանսավորում 2014 թ.	Դրամարկղային ծախս 2014 թ.	Դրամարկղային ծախս 2013թ.
	Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր				
Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	01	01	03	02	33,404.30	30,063.38	30,063.38	30,495.34
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանարապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	08	03	01	01	126,620.70	125,144.19	125,144.19	114,421.33
Հեռուստատեսային ծառայություններ	08	03	01	02	2,566,686.10	2,566,686.10	2,566,686.10	2,342,897.30
Ռադիո ծառայություններ	08	03	01	03	666,671.70	666,671.70	666,671.70	648,935.90
Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	08	03	01	04	27,266.40	27,266.40	27,266.40	25,642.00
Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	08	03	01	06	9,399.50	9,399.50	9,399.50	8,176.70
Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	08	03	01	10	147,849.10	147,849.10	147,849.10	147,900.30
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում	08	03	01	11	220,000.00	220,000.00	220,000.00	
«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում	08	03	01	12	50,000.00	50,000.00	50,000.00	
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	08	03	01	13	121,959.60	121,959.60	121,959.60	
«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	08	03	01	14	2,030.00	2,030.00	2,030.00	
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	10	09	02	03	3,432.00	1,937.72	1,937.72	1,867.08
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	11	01	01	01	2,565.00	2,479.00	2,479.00	856,299.90
Ընդամենը					**3,977,884.40**	**3,971,486.69**	**3,971,486.69**	**4,176,635.85**

08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում»

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը աշխատակազմի պահպանման նպատակով նախատեսվել է հատկացնել 129,185.70 հազ.դրամ:

Համաձայն 18.12.2014թ-ի ՀՀ Կառավարության N 1427-Ն որոշման, կատարվել է վերաբաշխում 2,565.00 հազ.դրամ գումարի չափով (08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրից դեպի 11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագիր) և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացվել է 2,565.00 հազ. դրամ համակարգչային տեխնիկայի համալրման և արդիականացման, ինչպես նաև գրասենյակային և այլ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման նպատակով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» հոդվածով):

Արդյունքում 2014թ. ՀՀ պետական բյուջեից Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը հատկացված 126,620.70 հազ.դրամից ծախսվել է 125,144.19 հազ.դրամ հետևյալ ուղղություններով՝

Աղյուսակ 2

(հազար դրամ)

Ծախսային հոդվածի անվանումը	Բյուջեն փոփոխություն ներից հետո	Դրամարկղային ծախս	Շեղում (+,-)
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	114,979.20	114,946.65	32.55
Կապի ծառայություններ	1,848.20	1,701.81	146.39
Ապահովագրական ծախսեր	120.00	106.18	13.82
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3,588.00	3,588.00	-
Գործուղումների և շրջագայության ծախսեր	1,104.20	98.00	1,006.20
Համակարգչային ծառայություններ	200.00		200.00
Ներկայացուցչական ծախսեր	500.00	499.02	0.98
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800.00	791.70	8.30
Գրասենյակային նյութեր և հագուստ	590.10	535.09	55.01
Տրանսպորտային նյութեր	2,764.00	2,760.21	3.79
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	91.00	83.28	7.72
Պարտադիր վճարներ	36.00	34.25	1.75
Ընդամենը	**126,620.70**	**125,144.19**	**1,476.51**

2014թ. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով տնտեսվել է 1,476.51 հազ.դրամ:

2014թ.-ի տարեսկզբին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության դեբիտորական պարտքի մնացորդը կազմել է 155.23 հազ.դրամ, իսկ տարեվերջին՝ 1,181.52 հազ.դրամ: Դեբիտորական պարտքի տարեվերջի մնացորդը մեծ մասամբ բաղկացած է հետևյալ գումաներից՝

- 166.03 հազ.դրամ – տարեվերջի դրությամբ եկամտահարկի գծով կանխավճար
- 273.76 հազ.դրամ – պահեստավորված գրասենյակային նյութեր,
- 658.45 հազ.դրամ – պահեստավորված տրանսպորտային նյութեր,

- 83.28 հազ.դրամ – պահեստավորված կենցաղային նյութեր :

2014թ.-ի տարեսկզբին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 459.17 հազ.դրամ, իսկ տարեվերջին՝ 139.4 հազ.դրամ, որն իրենից ներկայացնում է դեկտեմբեր ամսվա կապի ծառայությունների դիմաց վճարվելիք գումար:

01.01.03.02 «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ»

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հանդիսանում է Հեռարձակողների եվրոպական միության լիիրավ անդամ: Այդ կազմակերպությանը անդամակցության տարեկան վճարը կազմում է 75,000.00 շվեյցարական ֆրանկ:

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 33,404.30 հազ.դրամ:

Հեռարձակողների եվրոպական միության կողմից ներկայացված վճարման փաստաթղթերի համաձայն՝ 2014թ. տարեկան անդամակցության վճարը կազմել է 67,499.00 շվեյցարական ֆրանկ և որպես հետևանք փաստացի ծախսը 2014թ-ի համար կազմել է 30,063.38 հազ.դրամ:

Աղյուսակ 3

2013-2014թ.թ. դրամարկղային ծախսի համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013 թ.	2014 թ.	Շեղում(+, -)
01.01.03.02	«Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ»	30,495.34	30,063.38	-431.96

08.03.01.02. «Հեռուստատեսային ծառայություններ»

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերկեություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 2,566,686.10 դրամ:

Աղյուսակ 4

2013-2014թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
08.03.01.02	«Հեռուստատեսային ծառայություններ»	2,342,897.30	2,566,686.10	223,788.80

2014թ. հաստատված բյուջեն 2013թ. համեմատ աճել է 223,788.80 հազ.դրամով, ինչը մասնավորապես պայմանավորված է հետևյալով՝

- 108,266.00 հազ. դրամ – աշխատավարձի ֆոնդի ավելացում,
- 97,642.00 հազ.դրամ – հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերի ավելացում,
- 9,728.50 հազ.դրամ – արբանյակային հեռարձակման ծառայությունների դիմաց վճարվելիք գումարի ավելացմում՝ եվրոյի փոխարժեքի ավելացման հետևանքով,
- մնացած մասը իրենից ներկայացնում է ընթացիկ ծախսերի տարբեր հոդվածների ծավալների և/կամ գների բարձրացում և ոչ էական է:

2014թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված գումարի հետ:

<u>08.03.01.03 «Ռադիո ծառայություններ»</u>

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային ռադիոընկերությանը «Ընթացիկ դրամշնորհներ պետական և առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 666,671.70 հազ.դրամ:

Աղյուսակ 5

2013-2014թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
08.03.01.03	«Ռադիո ծառայություններ»	648,935.90	666,671.70	17,735.8

2014թ. հաստատված բյուջեն 2013թ. համեմատ աճել է 17,735.80 հազ.դրամով, ինչը մասնավորապես պայմանավորված է հետևյալով՝

- աշխատավարձի ծախսերը ավելացվել են 11,759.10 հազ.դրամով,
- էլեկտրաէներգիայի սակագնի ավելացման հետևանքով բյուջետային հայտի ջեռուցման և էլեկտրաէներգիայի ծախսի գումարը ավելացվել է 1,022.1 հազ.դրամով:
- <u>ռադիոթատրոնների պատրաստման և/կամ ձեռքբերման նպատակով հատկացվել է 5,000.0</u> հազ.դրամ,

- մնացած մասը իրենից ներկայացնում է ընթացիկ ծախսերի տարբեր հոդվածների ծավալների և/կամ գների բարձրացում և ոչ էական է:

2014թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված գումարի հետ:

08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ»

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրվ ընկերությանը «Ընթացիկ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 27,266.40 հազ.դրամ:

Աղյուսակ 6

2013-2014թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
08.03.01.04	«Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ»	25,642.00	27,266.40	1,624.40

2014թ. հաստատված բյուջեն 2013թ. համեմատ աճել է 1,624.40 հազ.դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2014թ-ին նվազագույն աշխատավարձի շեմի ավելացման պատճառով բյուջետային հայտի աշխատավարձի ծախսերի ավելացմամբ:

2014թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված գումարի հետ:

08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ»

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հասարականան կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հասարական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 9,399.50 հազ.դրամ:

Աղյուսակ 7

2013-2014թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
08.03.01.06	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ»	8,176.70	9,399.50	1,222.80

2014թ. հաստատված բյուջեն 2013թ. համեմատ աճել է 1,222.80 հազ.դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հատկացված գումարով:

2014թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված գումարի հետ:

08.03.01.10 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ»

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Ընթացիկ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 147,849.10 հազ.դրամ:

Աղյուսակ 8

2013-2014թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
08.03.01.10	«Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ»	147,900.30	147,849.10	-51.20

2014թ. հաստատված բյուջեն 2013թ. համեմատ կրճատվել է 51.20 հազ.դրամով, ինչը ոչ էական է:

2014թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված գումարի հետ:

08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով «Կապիտալ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 220,000.00 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2014թ-ին: 2013թ-ին նշված ծրագրով հատկացումներ չեն նախատեսվել:

08.03.01.12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում» ծրագրով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 50,000.00 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2014թ-ին: 2013թ-ին նշված ծրագրով հատկացումներ չեն նախատեսվել:

08.03.01.13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում» ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 121,959.60 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2014թ-ին: 2013թ-ին նշված ծրագրով հատկացումներ չեն նախատեսվել:

08.03.01.14. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում,

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում» ծրագրով «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 2,030.00 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2014թ-ին: 2013թ-ին նշված ծրագրով հատկացումներ չեն նախատեսվել:

10.09.02.02 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում»

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 122 -Ն որոշման «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացվել է 3,432.00 հազ.դրամ: Փաստացի ծախսը 2014թ-ի համար կազմել է 1,937.72 հազ.դրամ:

Աղյուսակ 9

2013-2014թ.թ. դրամարկղային ծախսերի համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
10.09.02.02	«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում»	1,867.08	1,937.72	70.64

11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»

2014-ի ընթացքում Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տրամադրվել է ընդհանուր առմամբ 2,565.00 հազ.դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1427-Ն որոշման, կատարվել է վերաբաշխում 2,565.00 հազ.դրամ գումարի չափով (08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրից դեպի 11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագիր) և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը հատկացվել է 2,565.00 հազ. դրամ համակարգչային տեխնիկայի համալրման և արդիականացման, ինչպես նաև գրասենյակային և այլ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման նպատակով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» հոդվածով): Հատկացված գումարից փաստացի ծախսը կազմել է 2,479.00 հազ.դրամ:

Աղյուսակ 10

2013-2014թթ. դրամարկղային ծախսի համեմատական

(հազար դրամ)

Ծրագիր	Ծրագրի անվանումը	2013թ.	2014թ.	Շեղում(+, -)
11.01.01.01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	856,299.90	2,479.00	-853,820.90

2013թ.-ին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին կատարված հատկացումներից 850,000.00 հազ. դրամը հատկացվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին, իսկ մնացած 6,441.40 հազ.դրամը՝ Հայաստանի հանրային հեռուսառադիոընկերությանը:

Հաշվետվություն

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի վերաբերյալ, որոնց հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել են դրամաշնորհի տեսքով առանց մրցույթի

Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ կառավարման մարմնի անվանումը Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ

հազ. դրամ

Բյուջետային			Ծախսային ծրագրի անվանումը	Տարեսկզբին հաստատված տարեկան դրամաշնորհի գումարը	Տարեկան ճշտված գումար	Դրամարկղային ծախս	Դրամաշնորհ ստացող տնտեսվարող սուբյեկտի անվանումը
Բաժին	Խումբ	Դաս					
08	03	01	02. Հեռուստատեսային ծառայություններ	2 566 686,10	2 566 686,10	2 566 686,10	«Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
08	03	01	03. Ռադիո ծառայություններ	666 671,70	666 671,70	666 671,70	«Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
08	03	01	04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	27 266,40	27 266,40	27 266,40	«Շիրակի Հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
08	03	01	06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	9 399,50	9 399,50	9 399,50	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ
08	03	01	10. Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	147 849,10	147 849,10	147 849,10	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
08	03	01	11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում	220 000,00	220 000,00	220 000,00	«Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
08	03	01	12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում	50 000,00	50 000,00	50 000,00	«Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
08	03	01	13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	121 959,60	121 959,60	121 959,60	«Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
08	03	01	14. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	2 030,00	2 030,00	2 030,00	«Շիրակի Հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Օրինակելի
ձև Հ-2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2014թ. - 31.12.2014թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**
2. Փոստային հասցեն՝ **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը _____
5. Հիմնարկը սպասարկող՝ ՏԳԲ-ի անվանումը **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը 900011430163
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) 1
8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
   - Բաժին N 08
   - Խումբ N 03
   - Դաս N 01
9. Ծրագրի անվանումը՝ **Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**
10. Ծրագրի կոդը 01
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 10 50 33
12. Չափի միավորը՝ *հազար դրամ*

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի		Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում			Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)		Դրամարկղի մնացորդ
	անվանումները	NN		ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից					Ընդամենը	Որոնցից՝ 30 օրից անց պարտքեր	
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	է	Ը=Դ+Ե+Զ+է	Թ	ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	**Ընթացիկ ծախսեր**	**x**	**129 185,70**	**-**	**(2 565,00)**	**-**	**126 620,70**	**125 144,19**	**125 144,19**	**123 798,13**		**-**	**-**
	այդ թվում՝												
1100000	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,**	**x**	**129 185,70**	**-**	**(2 565,00)**	**-**	**126 620,70**	**125 144,19**	**125 144,19**	**123 798,13**		**-**	**-**
1110000	**1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,** այդ թվում՝	x	114 979,20	-	-	-	114 979,20	114 946,65	114 946,65	114 603,47		-	-
1110000	**1.1 Աշխատանքի վարձատրություն**	x	114 979,20	-	-	-	114 979,20	114 946,65	114 946,65	114 603,47		-	-
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	**4111**	114 979,20		-	-	114 979,20	114 946,65	114 946,65	114 603,47			
1117000	-Սոցիալական ապահովության վճարներ	**4131**	-			-	-	-	-				
1120000	**2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում**	x	14 170,50	-	(2 565,00)	-	11 605,50	10 163,29	10 163,29	9 160,41		-	-
1121000	***2.1 Շարունակական ծախսեր***	x	6 656,20	-	(1 100,00)	-	5 556,20	5 395,99	5 395,99	5 270,64		-	-
1121400	-Կապի ծառայություններ	**4214**	2 948,20		(1 100,00)	-	1 848,20	1 701,81	1 701,81	1576,46			
1121500	-Ապահովագրական ծախսեր	**4215**	120,00		-	-	120,00	106,18	106,18	106,18			
1121600	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**	3 588,00			-	3 588,00	3 588,00	3 588,00	3 588,00			
1122000	***2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր***	x	2 833,20	-	(1 465,00)	(264,00)	1 104,20	98,00	98,00	98,00		-	-
1122100	-Ներքին գործուղումներ	**4221**					-	98,00	98,00	98,00			
1122200	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	**4222**					-						
1123000	***2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում***	x	700,00	-	-	-	700,00	499,02	499,02	499,02		-	-
1123200	-Համակարգչային ծառայություններ	**4232**	200,00				200,00	-	-	-			

1123700	-Ներկայացուցչական ծախսեր	**4237**	500,00			-	500,00	499,02	499,02	499,02			
1125000	***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)***	x	800,00	-	-	-	800,00	791,70	791,70	791,70		-	-
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	**4252**	800,00			-	800,00	791,70	791,70	791,70			
1126000	***2.6 Նյութեր***	x	3 181,10	-	-	264,00	3 445,10	3 378,58	3 378,58	2 501,05		-	-
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	**4261**	417,10		-	173,00	590,10	535,09	535,09	261,29			
1126400	-Տրանսպորտային նյութեր	**4264**	2 764,00		-	-	2 764,00	2 760,21	2 760,21	2 239,76			
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	**4267**				91,00	91,00	83,28	83,28				
1170000	***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	x	36,00	-	-	-	36,00	34,25	34,25	34,25		-	-
1172000	*7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ*	x	36,00	-			36,00	34,25	34,25	34,25			
1172300	-Պարտադիր վճարներ	**4823**				-	-			-			
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000)	x	129 185,70	-	(2 565,00)	-	126 620,70	125 144,19	125 144,19	123 798,13		-	-

Օրինակելի ձև Հ-4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2014թ. - 31.12.2014թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**

2. Փոստային հասցեն՝ **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**

3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

4.Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը _____

5. Հիմնարկը սպասարկող՝ ՏԳԲ-ի անվանումը **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը: 900011430163

7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2): 1

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Բաժին N 08

Խումբ N 03

Դաս N 01

9. Ծրագրի անվանումը՝ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

10. Ծրագրի կոդը 01

11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 10 50 33

12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	Դեբիտորական պարտքեր				Կրեդիտորական պարտքեր			
			տարեսկիզբ		տարեվերջ		տարեսկիզբ		տարեվերջ	
			ընդամենը	ն/թ բյուջեից	ընդամենը	ն/թ բյուջեից	ընդամենը	ն/թ բյուջեից	ընդամենը	ն/թ բյուջեից
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	155,23	155,23	1 181,52	1 181,52	459,17	459,17	139,40	139,40
1110000	**1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝**	**x**	17,23	17,23	166,03	166,03	194,38	194,38	-	-
1110000	**1.1 Աշխատանքի վարձատրություն**	**x**	17,23	17,23	166,03	166,03	194,38	194,38	-	-
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	17,23	17,23	166,03	166,03	194,38	194,38	-	-
1117000	-Սոցիալական ապահովության վճարներ	4131		-	-	-		-	-	-
1120000	**2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում**	**x**	138,00	138,00	1 015,49	1 015,49	264,79	264,79	139,40	139,40
1121000	***2.1 Շարունակական ծախսեր***		-	-	-	-	264,75	264,75	139,40	139,40
1121400	-Կապի ծառայություններ	4214	-	-	-	-	264,75	264,75	139,40	139,40
1121500	-Ապահովագրական ծախսեր	4215	-	-	-	-	-	-	-	-
1121600	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	-	-	-	-	-	-	-	-
1122000	***2.2 Գործուղումների և շրջագայություններ ծախսեր***	**x**	-	-	-	-	-	-	-	-
1122200	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	-	-	-	-	-	-	-	-
1123000	***2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում***	**x**	-	-	-	-	-	-	-	-
1123200	-Համակարգչային ծառայություններ	4232	-	-	-	-	-	-	-	-

Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8
	-Համակարգչային ծառայություններին ուղղված պահեստավորված միջոցներ	4232*	-	-	-	-	-	-	-	-
1123700	-Ներկայացուցչական ծախսեր	4237	-	-	-	-	-	-	-	-
	-Ներկայացուցչական ծախսերին ուղղված պահեստավորված միջոցներ	4237*	-	-	-	-	-	-	-	-
1125000	***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և***	**x**	-	-	-	-	-	-	-	-
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	-	-	-	-	-	-	-	-
1126000	***2.6 Նյութեր***	**x**	138,00	138,00	1 015,49	1 015,49	0,04	0,04	-	-
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	-	-	-	-	0,04	0,04	-	-
	-Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ	4261*	-	-	273,76	273,76	-	-	-	-
1126400	-Տրանսպորտային նյութեր	4264	-	-	-	-	-	-	-	-
	-Պահեստավորված տրանսպորտային նյութեր	4264*	138,00	138,00	658,45	658,45	-	-	-	-
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267								
	-Պահեստավորված կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267*			83,28	83,28				
1170000	***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	**x**	-	-	-	-	-	-	-	-
1172000	***7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ***	**x**	-	-	-	-	-	-	-	-
1172300	-Պարտադիր վճարներ	4823		-	-	-		-	-	-
1000000	Ընդամենը ծախսեր (տող1200000+ տող1100000)	x	155,23	155,23	1 181,52	1 181,52	459,17	459,17	139,40	139,40
	այդ թվում									
	Ընդամենը դեբիտորական, կրեդիտորական պարտքեր		17,23	17,23	166,03	166,03	459,17	459,17	139,40	139,40
	Ընդամենը պահեստավորված միջոցներ		138,00	138,00	1 015,49	1 015,49	-	-	-	-

Օրինակելի
ձև Հ-2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2014թ. - 31.12.14թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**
2. Փոստային հասցեն՝ **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

4.Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը _____

5. Հիմնարկը սպասարկող՝ ՏԳԲ-ի անվանումը **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը 900011430221
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) 1

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
   - Բաժին N 11
   - Խումբ N 01
   - Դաս N 01
9. Ծրագրի անվանումը՝ **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ**
10. Ծրագրի կոդը 01
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 10 50 33
12. Չափի միավորը՝ *հազար դրամ*

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի		Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում			Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)		Դրամարկղի մնացորդ
	անվանումները	NN		ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից					Ընդամենը	Որոնցից՝ 30 օրից անց պարտքեր	
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	**Ընթացիկ ծախսեր**	**x**	**-**	**-**	**2 565,00**	**-**	**2 565,00**	**2 479,00**	**2 479,00**	**2 479,00**		**-**	**-**
	այդ թվում՝												
1100000	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,**	**x**	**-**	**-**	**2 565,00**	**-**	**2 565,00**	**2 479,00**	**2 479,00**	**2 479,00**		**-**	**-**
	1. Վարչական սարքավորումներ	**x**	-	-	2 565,00	-	2 565,00	2 479,00	2 479,00	2 479,00			
	- Վարչական սարքավորումներ	**5122**			2 565,00		2 565,00	2 479,00	2 479,00	2 479,00			
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000)	x	-	-	2 565,00	-	2 565,00	2 479,00	2 479,00	2 479,00		-	-

Օրինակելի ձև Հ-7

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

01.01.2014թ. - 31.12.2014թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**
2. Փոստային հասցեն՝ **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը _____
